Հավելված
ՀՀ կառավարության 2021 թվականի
հոկտեմբերի 1-ի N 1627 -Լ որոշման

«Հավելված N 2
ՀՀ կառավարության 2021 թվականի
սեպտեմբերի 30-ի N 1622 -Լ որոշման

# Ց Ա Ն Կ
# ԵՐԵԽԱՅԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

| Հ/Հ | Միջոցառման անվանումը | Պատասխանատու կատարողը | Ակնկալվող արդյունքները | Կատարման ժամկետը | Վերստուգելի չափանիշ | Ֆինանսավորման աղբյուրը |
|---|---|---|---|---|---|---|
| **Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն** | | | | | | |
| 1. | Երեխաների շուրջօրյա խնամքի ծառայություններ | Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | Ապահովված է առանց ծնողական խնամքի մնացած երեխաների իրավունքների և շահերի պաշտպանությունը | 2022 թվականի ընթացքում | Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության համակարգի 5 մանկատանը կխնամվի 585 երեխա | Հայաստանի Հանրապետության պետական բյուջե /1,914,885.9 հազ. դրամ/ |
| 2. | ՀՀ երեխաների շուրջօրյա խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում խնամվող և հաստատությունում հայտնվելու ռիսկի խմբում գտնվող երեխաների ընտանիք վերադարձնելու և մուտքը հաստատություններ կանխարգելելու ծառայություններ | Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն Հասարակական կազմակերպություններ /համաձայնությամբ/ | Ապահովված է կյանքի դժվարին իրավիճակում հայնված Երեխայի խնամքն ու դաստիարակությունը կենսաբանական ընտանիքում | 2022 թվականի ընթացքում | Կկանխարգելվի 50 երեխայի մուտքը հաստատություններ | Հայաստանի Հանրապետության պետական բյուջե Հայաստանի Հանրապետության օրենքով չարգելված այլ աղբյուրներ /15,559.29 հազ. դրամ/ |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 3. | Երեխաների շուրջօրյա խնամքի բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունների 18-23 տարեկան շրջանավարտների համար բնակարանների վարձակալություն | Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | Ապահովված է շրջանավարտների իրավունքների և շահերի պաշտպանությունը | 2022 թվականի ընթացքում | Ծրագրի շրջանակներում աջակցություն կտրամադրվի 7 շահառուի | Հայաստանի Հանրապետության պետական բյուջե /1,440.00 հազ. դրամ/ |
| 4. | Երեխաների խնամքի ցերեկային ծառայությունների տրամադրում | Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն Հասարակական կազմակերպություններ /համաձայնությամբ | Ապահովված է կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների խնամքը կենսաբանական ընտանիքներում | 2022 թվականի ընթացքում | Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված և հաշմանդամություն ունեցող 1100 երեխայի կտրամադրվեն ցերեկային խնամքի ծառայություններ և նրանց ընտանիքներին՝ սոցիալ-հոգեբանական ծառայություններ | Հայաստանի Հանրապետության պետական բյուջե /113,881.49 հազ. դրամ/ |
| 5. | Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաներին ժամանակավոր խնամքի տրամադրման ծառայություններ՝ ճգնաժամային կենտրոնների կողմից տրամադրվող ծառայությունների միջոցով | Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | Ապահովված է կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների իրավունքների և շահերի պաշտպանությունը | 2022 թվականի ընթացքում | Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված մինչև 18 տարեկան 125 երեխայի կտրամադրվի մինչև 6 ամիս ժամկետով շուրջօրյա խնամք | Հայաստանի Հանրապետության պետական բյուջե /441,191.9 հազ. դրամ/ |
| 6. | Երեխաների և ընտանիքների աջակցության տրամադրման ծառայություններ | Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | Ապահովված է կյանքի դժվարին իրավիճակում հայնված երեխայի և նրա ընտանիքի սոցիալ-հոգեբանական վերականգնումը, երեխայի ներառումը հասարակություն | 2022 թվականի ընթացքում | Երեխայի և ընտանիքի աջակցության 6 կենտրոնում կյանքի դժվարին իրավիճակում հայտնված 600 երեխայի և նրանց ընտանիքներին կտրամադրվեն սոցիալ-հոգեբանական ծառայություններ | Հայաստանի Հանրապետության պետական բյուջե /545,383.7 հազ. դրամ/ |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 7. | Երեխաների շուրջօրյա խնամքի բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություններում խնամվող դպրոցական տարիքի երեխաներին դրամական աջակցության տրամադրում | Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | Ապահովված է առանց ծնողական խնամքի մնացած երեխայի կյանքի հմտությունների ձեռքբերումը և ներառումը հասարակությանը | 2022 թվականի ընթացքում | Մանկատներում խնամվող դպրոցահասակ՝ 7-12 և 13-18 տարեկան 95 երեխայի կտրամադրվի մանր ծախսերի համար նախատեսված գումար | Հայաստանի Հանրապետության պետական բյուջե /2,952.0 հազ. դրամ/ |
| 8. | Կենսաբանական ընտանիքներ տեղափոխված երեխաների ընտանիքներին բնաիրային օգնության փաթեթի տրամադրում | Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն Հասարակական կազմակերպություններ /համաձայնությամբ/ | Ապահովված է կյանքի դժվարին իրավիճակում հայնված Երեխայի խնամքն ու դաստիարակությունը կենսաբանական ընտանիքում | 2022 թվականի ընթացքում | 100 երեխայի կենսաբանական ընտանիքների կտրամադրվի բնաիրային օգնության փաթեթ | Հայաստանի Հանրապետության պետական բյուջե Հայաստանի Հանրապետության օրենքով չարգելված այլ աղբյուրներ /31,856.0 հազ. դրամ/ |
| 9. | Երեխաների շուրջօրյա խնամքի հաստատությունների շրջանավարտներին միանվագ դրամական օգնության տրամադրում | Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | Ապահովված է առանց ծնողական խնամքի մնացած երեխայի ներառումը հասարակությանը | 2022 թվականի ընթացքում | Մանկատների 9 շրջանավարտի տրամադրվի միանվագ դրամական օգնություն | Հայաստանի Հանրապետության պետական բյուջե /450.0 հազ. դրամ/ |
| 10. | Խնամատար ընտանիքում երեխայի խնամքի և դաստիարակության աջակցության տրամադրում | Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | Ապահովված է կյանքի դժվարին իրավիճակում հայնված երեխայի խնամքն ու դաստիարակությունը ընտանիքում | 2022 թվականի ընթացքում | Խնամատար ընտանիքներում խնամք կտրամադրվի 61 երեխայի | Հայաստանի Հանրապետության պետական բյուջե /126,920.1 հազ. դրամ/ |
| 11. | Երեխաների իրավունքների պաշտպանության համակարգի տարբեր կառույցների կադրերի մասնագիտական պատրաստման և վերապատրաստման իրականացում | Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Միջազգային և տեղական հասարակական կազմակերպություններ /համաձայնությամբ/ | Իրականացվել է երեխաների իրավունքների պաշտպանության տարբեր կառույցների մասնագետների վերապատրաստումներ | 2022 թվականի ընթացքում | Վերապատրաստված առնվազն 200 մասնագետ | Հայաստանի Հանրապետության պետական բյուջե /960.0 հազ դրամ/, Օրենքով չարգելված միջոցներ |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 12. | Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների անդամների, Միասնական սոցիալական ծառայության տարածքային կենտրոնների մասնագետների վերապատրաստում | Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Տարածքային կառավարման և ենթակառուցվածքներինախարարություն | Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների վերապատրաստված անդամներ, ՄՍԾՏԿ վերապատրաստված մասնագետներ | 2022 թվականի ընթացքում | Վերապատրաստված առնվազն 60 մասնագետ | ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ |
| 13. | Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների տեղեկատվական համակարգի նոր տարբերակի մշակում | Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Միջազգային և տեղական հասարակական կազմակերպություններ /համաձայնությամբ/ | Մշակված նոր տեղեկատվական համակարգ | 2022 թվականի ընթացքում | Արդի տեղեկատվական համակարգ, որն ունի այլ համակարգերի հետ փոխգործելություն ապահովելու հնարավորություն | ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ |
| 14. | Երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտի օրենսդրության բարեփոխում | Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | Բարեփոխվել են երեխաների այլընտրանքային խնամքի կազմակերպման գործընթացները, ապահովվել են նպաստավոր պայմաններ՝ երեխաների՝ կենսաբանական ընտանիքների հետ վերամիավորման համար | 2022 թվականի ընթացքում | ՀՀ ընտանեկան օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ իրականացնելու մասին ՀՀ օրենքի նախագծի և Երեխայի իրավունքների մասին ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ իրականացնելու մասին ՀՀ օրենքի նախագծի ընդունում | Ֆինանսական միջոցներ չեն պահանջվում |
| 15. | Երեխայի իրավունքների վերաբերյալ իրազեկման ակցիաների կազմակերպում | Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | Իրականացվել են իրազեկման ակցիաներ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների ընտանիքների, նրանց համայնքում բնակվող անձանց շրջանակներում, | 2022 թվականի ընթացքում | Իրականացված առնվազն 7 հանդիպում ընտանիքների և համայնքի ներկայացուցիչների հետ, պատրաստված և | ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | ինչպես նաև հոլովակների միջոցով | | տարածված առնվազն 3 հոլովակ | |
| **ՀՀ արդարադատության նախարարություն** | | | | | | |
| 16. | Քրեական արդարադատության գործընթացում երեխայազգային մոտեցումներ ապահովելու նպատակով հոգեբանների մասնագիտացում և որակավորում | Արդարադատության նախարարություն | Քրեական արդարադատության գործընթացում երեխաների հետ աշխատանքի ոլորտում մասնագիտական ներուժի զարգացում | 2022 թվականի ընթացքում | Վերապատրաստվել է առնվազն 25 հոգեբան | ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ /7,700.0 հազ. դրամ/ |
| 17. | Անչափահասների արդարադատության խորհրդի գործունեության զարգացում՝ որպես ուղենշող երկրի ազգային հարթակ<br><br>Վերջ երեխաների նկատմամբ բռնությանը գլոբալ համագործակցության ցանցում (EVAC Global partnership) | Արդարադատության նախարարություն | Երեխաների նկատմամբ բռնության դեմ պայքարի միջազգային փորձի տեղայնացում, հանրայնացում և երեխաների նկատմամբ բռնության նվազեցում | 2022 թվականի ընթացքում | Անչափահասների արդարադատության խորհրդի 3 նիստի կազմակերպում,<br><br>Վերջ երեխաների նկատմամբ բռնությանը, գլոբալ համագործակցության ցանցի վերաբերյալ իրազեկվածության բարձրացում | ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ /1,800.0 հազ.դրամ/ |
| 18. | Իրավախախտում կատարած անչափահասների կրթության իրավունքի իրացում, հանրակրթության ապահովում | Արդարադատության նախարարություն | Քրեակատարողական հիմնարկներում մինչև 19 տարեկան անչափահասների և չափահասների համար հանրակրթության ապահովում | 2022 թվականի ընթացքում | Քրեակատարողական հիմնարկներում պատիժ կրող մինչև 19 տարեկան անչափահասների և չափահասների հանրակրթության կազմակերպում | ՀՀ պետական բյուջե |
| 19. | Բռնության զոհ դարձած երեխաների հետ աշխատող մասնագետների միջոլորտային կարողությունների զարգացում | Արդարադատության նախարարություն | Բռնության զոհ դարձած երեխաների հետ աշխատանքում միջոլորտային համագործակցության բարելավում և զարգացում | 2022 թվականի ընթացքում | Առնվազն 50 վերապատրաստված մասնագետ (իրավապահ համակարգի մարմինների ներկայացուցիչներ և սոցիալական ոլորտի աշխատակիցներ) | ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ /12,000.0 հազ.դրամ/ |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 20. | Երեխաների անձնական տվյալների պաշտպանության վերաբերյալ իրազեկում մասնագետների, ծնողների և երեխաների շրջանում | Արդարադատության նախարարություն | Երեխաների անձնական տվյալների պաշտպանության վերաբերյալ իրազեկվածության բարձրացում | 2022 թվականի ընթացքում | Մասնագետների, ծնողների, երեխաների շրջանում առնվազն 10-ական հանդիպումների կազմակերպում (շուրջ 500 մասնակից) | ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ /3,000.0 հազ.դրամ/ |
| **Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն** | | | | | | |
| 21. | Համընդհանուր ներառական հանրակրթության համակարգի շարունակական ներդրում | Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն | Հանրակրթական դպրոցներում ընդլայնվել են կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության կազմակերպման հնարավորությունները | 2022 թվականի ընթացքում | Հանրակրթական դպրոցներում սովորում են կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող շուրջ 7000 երեխա | ՀՀ պետական բյուջե<br><br>«1146. Հանրակրթության ծրագրի» շրջանակներում<br><br>ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ |
| 22. | Պարտադիր կրթությունից դուրս մնացած երեխաների բացահայտման և ուղղորդման համակարգի գործարկում | Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն | Նախադրյալներ են ստեղծվել կրթությունից դուրս մնացած երեխաների կրթության իրավունքի իրացման համար | 2022 թվականի ընթացքում | Կրթությունից դուրս մնացած շուրջ 400 երեխա բացահայտված և ուղղորդված են հանրակրթության համակարգ | ՀՀ պետական բյուջե<br><br>«1227.Կրթության ոլորտում տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների (ՏՀՏ) ներդրում» ծրագրի շրջանակներում<br><br>ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ |
| 23. | Նախադպրոցական կրթության ոլորտում անցում համընդհանուր ներառականության | Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն | Նախադպրոցական կրթության ոլորտում ընդլայնվել են կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության կազմակերպման հնարավորությունները | 2022 թվականի ընթացքում | Նախադպրոցական ծառայություններում ընդգրկված են կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող շուրջ 1670 երեխա | ՀՀ պետական բյուջե<br><br>«1146.Հանրակրթության ծրագրի» շրջանակներում 236 973.0 հազ. դրամ<br><br>ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 24. | Հանրապետության բոլոր մարզերում նախադպրոցական ծառայությունների ցանցի ընդլայնում | Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն | Նախադպրոցական կրթության կազմակերպման այլընտրանքային և ծախսարդյունավետ մոդելների փուլային ներդրման միջոցով ՀՀ մարզերում ընդլայնվել է երեխաների ընդգրկվածությունը նախադպրոցական կրթության մեջ | 2022 թվականի ընթացքում | Նախադպրոցական ծառայություններում ընդգրկված երեխաների թիվն ավելացել է 900-ով | ՀՀ պետական բյուջե<br><br>«1146.Հանրակրթության ծրագրի» շրջանակներում<br>77 451.0 հազ. դրամ<br><br>ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ |
| 25. | Ամառային դպրոցի կազմակերպում՝ խոցելի խմբերի երեխաների համար<br>«Խոցելի խմբերի երեխաների ընթերցող դառնալու իրավունքը»<br>(20-30 երեխա) | Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն /«Խնկո Ապոր անվան ազգային մանկական գրադարան» ՊՈԱԿ/ | Խոցելի խմբերի երեխաների համար արտադպրոցական, գեղագիտական, մշակութային կրթության ապահովում, մշակութային-ժամանցային առօրյայի կազմակերպում, երեխաների ստեղծագործական ներուժի ներկայացման, արժևորման և զարգացման պայմանների ապահովում | 2022 թվականի ընթացքում | Ձեռք բերված գիտելիքների և հմտությունների պարբերական ստուգում, վերլուծում՝ բաց դասերի, ցուցահանդեսների, խաղերի միջոցով և գնահատում՝ թեստ-հարցաթերթիկների միջոցով | ՀՀ պետական բյուջե<br><br>«1124. Գրահրատարակչության և գրադարանների ծրագրի» շրջանակում |
| 26. | Դպրոցականների համար բաժանորդային ծրագրի իրականացում | Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն | Ծրագրի կիրարկման արդյունքում երեխաներն անվճար այցելելու են երեք մշակութային հաստատություն՝ թանգարան, թատրոն և դասական երաժշտության համերգասրահ | 2022 թվականի ընթացքում | Ծրագրին միացած 91 կազմակերպություններում (56 թանգարան, 21 թատրոն, 11 համերգային և 3 այլ մշակութային կազմակերպություն) տարվա ընթացքում պատրաստ են սպասարկել շուրջ 350 000 աբոնեմենտային այցելու (աշակերտներ և ուսուցիչներ) | ՀՀ պետական բյուջե և օրենքով չարգելված այլ աղբյուրներ<br><br>«1075. Մշակութային ժառանգության ծրագրի» շրջանակում |
| 27. | Նախարարության ենթակայության բոլոր թանգարաններում երեխաների տարբեր տարիքային և սոցիալական, այդ թվում՝ | Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն | Կրթամշակութային ծրագրերը կնպաստեն երեխաների մշակութային, քաղաքացիական դաստիարակությանը, մշակութային | 2022 թվականի ընթացքում | 21 թանգարաններում կիրականացվի շուրջ 40 կրթամշակութային ծրագիր | ՀՀ պետական բյուջե և օրենքով չարգելված այլ աղբյուրներ |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | հաշմանդամություն ունեցող խմբերի համար կրթամշակութային ծրագրերի իրականացում | | ժառանգությանն առավել մատչելի հաղորդակցությանը, նրանց ստեղծագործական ներուժի բացահայտմանն ու ակտիվացմանը | | | «1075. Մշակութային ժառանգության ծրագրի» շրջանակում |
| 28. | Աջակցություն շնորհալի պատանի երաժիշտ կատարողների մասնագիտական կարողությունների զարգացմանը ու կատարելագործմանը | Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն | «ՄԵԿՆԱՐԿ» տաղանդի զարգացման նպատակային ծրագրով շնորհալի երեխաների բացահայտման և հետագա ուսուցման գործընթացի կազմակերպումը կապահովի մասնակիցների պրոֆեսիոնալ աճ և զարգացում, միջազգային ասպարեզում և մշակութային շուկայում հայ կատարողական արվեստի մրցունակության ապահովում | 2022 թվականի ընթացքում | Շնորհալի պատանի երաժիշտ կատարողներ,<br><br>«ՄԵԿՆԱՐԿ» տաղանդի զարգացման նպատակային ծրագրում ընդգրկված է 15 պատանի երաժիշտ | ՀՀ պետական բյուջե<br><br>12 000.0 հազ. դրամ |
| 29. | Ժամանակակից արվեստի տարբեր ոլորտներում մանկապատանեկան միջոցառումների և նախագծերի, այդ թվում՝ ներառական ծրագրերի աջակցություն | Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն | Շնորհալի երեխաների բացահայտում, նրանց մասնագիտական ունակությունների զարգացում, կրթության և մշակույթի փոխադարձ կապի ամրապնդում, հանրության շրջանում մշակութային կրթության նկատմամբ հետաքրքրության մեծացում, մշակութային կրթության ոլորտի դերակատարության բարձրացում | 2022 թվականի ընթացքում | Միջոցառումների և նախագծերի քանակ | ՀՀ պետական բյուջե<br><br>«1168. Արվեստների ծրագիր»<br>«11005» Մշակութային միջոցառումների իրականացում» միջոցառման շրջանակում |
| 30. | «Դպրոցականի ֆիլհարմոնիա» ծրագիր | Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն | Ճանաչողական, բացատրական համերգների միջոցով երեխաների գեղագիտական դաստիարակության, աշխարհայացքի ընդլայնման և բարձրաճաշակ ու գրագետ ունկնդրի դաստիարակում | 2022 թվականի ընթացքում | Համերգների քանակ (47 համերգ) | ՀՀ պետական բյուջե<br><br>«1168. Արվեստների ծրագիր»<br>«11004 Երաժշտարվեստի և պարարվեստի համերգներ» |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | միջոցառման շրջանակում |
| 31. | Երաժշտական, արվեստի, գեղարվեստի և պարարվեստի դպրոցներում ուսումնամեթոդական աշխատանքների իրականացում | Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն | Գեղարվեստական կրթություն իրականացնող ուսումնական հաստատություններում նոր դասավանդման մեթոդների և հնարքների ներդրում, դասավանդման որակի բարձրացում, մեթոդական խորհուրդներով մանկավարժների գիտելիքների ընդլայնում, շնորհալի երեխաների ունակությունների բացահայտմանն ու զարգացմանն ուղղված դասավանդման առանձնահատկություններ ի վերլուծութուն, մշակութային կրթության ոլորտի դերակատարության բարձրացում | 2022 թվականի ընթացքում | Գեղարվեստական կրթություն իրականացնող 203 դպրոցներ, Ուսումնամեթոդական աշխատանքներին մասնակցած 5000 աշակերտներ և 1350 ուսուցիչներ | ՀՀ պետական բյուջե<br><br>41 436.2 հազ. դրամ |
| 32. | «Մուլտիպլիկացիոն կինոնկարների արտադրություն» ծրագիր | Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն | Մանկապատանեկան լսարանին ուղղված կրթադաստիարակչական ուսուցողական, հայկական ազգային արժեհամակարգը հանրահռչակող, նրանց ազատ ժամանցի կազմակերպմանն ուղղված անիմացիոն ֆիլմերի ստեղծում | 2022 թվականի ընթացքում | Կինոնկարների քանակ<br>(4 մուլտիպլիկացիոն կինոնկար) | ՀՀ պետական բյուջե<br><br>«1056. Կինոմատոգրաֆիայի ծրագիր»<br>«11001» Կինոնկարների արտադրություն» միջոցառման շրջանակում |
| **Պաշտպանության նախարարություն** | | | | | | |
| 33. | Զինծառայողների շրջանում իրազեկման ակցիաների անցկացում՝ երեխաների իրավունքների պաշտպանության ու պահպանության | ՀՀ պաշտպանության նախարարություն | Կբարձրանա զինծառայողների իրազեկվածության մակարդակը գործող իրավական ակտերի վերաբերյալ | Պարբերաբար | Զինծառայողներն իրազեկված են միջազգային և ներպետական իրավական ակտերով սահմանված երեխաների | Ֆինանսական միջոցներ չեն պահանջվում |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | վերաբերյալ (այդ թվում՝ թրաֆիքինգի և հարկադիր աշխատանքի վերաբերյալ) | | | | իրավունքներին, պաշտպանության միջոցներին | |
| 34. | Մոնթե Մելքոնյանի անվան ռազմամարզական վարժարանում նախազորակոչային տարիքի սաների հետ իրազեկման ակցիաների կազմակերպում, որի ընթացքում նրանք կիրազեկվեն զինծառայողների և նրանց ընտանիքի անդամների իրավունքներին, ինչպես նաև ազդարարման համակարգին | ՀՀ պաշտպանության նախարարություն<br><br>ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության հետ համաձայնեցմամբ | Կբարձրանա վարժարանի սաների իրազեկվածության մակարդակը զինծառայողի իրավունքների և պարտականությունների վերաբերյալ | 2022 թվականի ընթացքում | Ռազմական կրթության նկատմամբ գրավչության բարձրացում,<br>ՀՀ ՊՆ Ռազմական համալսարաններում դիմորդների թվի ավելացում | Ֆինանսական միջոցներ չեն պահանջվում |
| 35. | Իրազեկման ակցիաների կազմակերպում ավագ դպրոցների աշակերտների համար ռազմական կրթության և զինծառայողների սոցիալական և առողջապահական արտոնությունների վերաբերյալ | Պաշտպանության նախարարություն<br><br>Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության հետ համաձայնեցմամբ | Կբարձրանա աշակերտների իրազեկվածությունը զինծառայողների իրավունքների վերաբերյալ | 2022թ. ընթացքում | ՊՆ ռազմաուսումնական հաստատությունների դիմորդների և պայմանագրային զինվորական ծառայության ընդունվողների թվաքանակի ավելացում | Ֆինանսական միջոցներ չեն պահանջվում |
| **Առողջապահության նախարարություն** | | | | | | |
| 36. | Առողջապահական պետական նպատակային ծրագրերի շրջանակներում երեխաների և դեռահասների առողջապահական ծառայությունների և բուժօգնության անհրաժեշտ ծավալների ապահովում | Առողջապահության նախարարություն | Երեխաների և դեռահասների առողջապահական ծառայությունների բյուջետային ֆինանսավորման շարունակականության ապահովում | 2022թ. ընթացքում | Տարեկան նպատակային ծրագրերում ամրագրված երեխաներին և դեռահասներին ուղղված պետության կողմից երաշխավորված անվճար բուժօգնության ծավալներ | Հայաստանի Հանրապետության պետական բյուջե «Ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական օգնության ծառայություններ» «Երեխաներին բժշկական օգնության ծառայություններ» |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | միջոցառումներ |
| 37. | Նորածնային և մանկական արտագնա անհետաձգելի բուժօգնության ծառայությունների շարունակականության ապահովում ՀՀ մարզերում | Առողջապահության նախարարություն | Մարզերում մասնագիտացված անհետաձգելի բուժօգնության կարիք ունեցող հիվանդներին մասնագիտացված բուժօգնության տրամադրում | 2022 թվականի ընթացքում | Մինչև 1 տարեկան երեխաների հիվանդանոցային մահաբերության ցուցանիշի նվազում | Հայաստանի Հանրապետության պետական բյուջե «Շտապ բժշկական օգնության ծառայություններ» |
| 38. | Երեխաների հիվանդանոցային բուժօգնության ծրագրի շարունակական իրականացում, մատուցվող ծառայությունների զարգացումների ապահովում | Առողջապահության նախարարություն | երեխաների հիվանդանոցային բուժօգնության մատչելիության առկա իրավիճակի պահպանում և բարելավում | 2022 թվականի ընթացքում | մինչև 5տ. երեխաների մահացության ցուցանիշի նվազում | Հայաստանի Հանրապետության պետական բյուջե «Երեխաներին բժշկական օգնության ծառայություններ» |
| 39. | Նյութափոխանակության ժառանգական հիվանդությունների և բնածին այլ շեղումների հայտնաբերմանն ուղղված նորածնային սկրինինգի ծրագրի շարունակական իրագործում, հայտնաբերված հիվանդ երեխաների հետագա բուժօգնության և հսկողության կազմակերպում | Առողջապահության նախարարություն | Նյութափոխանակության ժառանգական հիվանդությունների և բնածին այլ շեղումների հայտնաբերմանն ուղղված նորածնային սկրինինգի ծրագրի շարունակական իրագործում, հայտնաբերված հիվանդ երեխաների հետագա բուժօգնության և հսկողության | 2022 թվականի ընթացքում | Բնածին հիպոթիրեոզի, ֆենիլկետոնուրիայի իրականացվող սկրինինգներ նորածինների 100%, իսկ լսողության, անհասության ռետինոպաթիայի և ազդրի բնածին դիսպլազիայի ուղղությամբ սկրինինգները՝ 100% դեպքերում: | Հայաստանի Հանրապետության պետական բյուջե «Բնածին հիպոթիրեոզի, ֆենիլկենտոնուրիայի, լսողության և տեսողության (անհասների ռետինոպաթիա) խանգարումների, կոնքազդրային հոդի խախտման վաղ հայտնաբերման նպատակով նորածնային սքրինգների անցկացում» |
| 40. | Առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող և հաշմանդամություն ունեցող երեխաների համար | Առողջապահության նախարարություն | Զարգացման խանգարումներ և հաշմանդամություն ունեցող երեխաներին տրամադրվող ծառայությունների | 2022 թվականի ընթացքում | Մարզային/տարածաշրջանային արտահիվանդանոցային պայմաններում | Հայաստանի Հանրապետության պետական բյուջե |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | վերականգնողական բուժօգնության մատչելիության և որակի բարելավում | | մատչելիության բարձրացում, վերականգնողական բուժօգնության կազմակերպում | | մանկական վերականգնողական բժշկական օգնության և սպասարկման անհրաժեշտ ծավալների ապահովում | Հայաստանի Հանրապետության պետական բյուջե «Մտավոր, հոգեկան (վարքագծային), լսողական, ֆիզիկական (շարժողական) և զարգացման այլ խանգարումներով երեխաների գնահատման և վերականգնողական բուժման ծառայություններ» «Երեխաներին բժշկական օգնության ծառայություններ» |
| **ՀՀ Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմին** | | | | | | |
| 41. | Աշխատող երեխաների՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված երաշխիքների ապահովման մասին իրազեկման և աշխատող երեխաներին աշխատանքի վատթարագույն ձևերում ներգրավման կանխարգելման վերաբերյալ սեմինարների և քննարկումների կազմակերպում | Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմին | Կկանխար-գելվի երեխանե-րի ներգրա-վումը աշխա-տանքի վատթա-րագույն ձևերում, գործատուները և աշխատող երեխաները իրազեկված կլինեն իրենց իրավունքների և պարտականությունների մասին | 2022 թվականի ընթացքում | Ծրագրի շրջանակներում երեխաները կիրազեկվեն ՀՀ օրենսդրությամբ սահմանված իրենց իրավունքների, արտոնությունների և սահմանափակումների մասին | ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ |
| 42. | Համացանցի և սոցիալական ցանցերի միջոցով աշխատանքային իրավունքների և պարտականությունների, ինչպես նաև աշխատանքային շահագործման, | Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմին | Քաղաքացիների շրջանում կբարձրանա մարդկանց աշխատանքային իրավունքների և աշխատատեղում անվտանգ աշխատանքային պայմանների մասին իրազեկ-վածությունը: | 2022 թվականի ընթացքում | Ամսական պարբերականությամբ համացանցի և սոցիալական ցանցերի միջոցով կիրապարակվի 1-2 իրազեկման նյութեր | ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման ու վտանգի նվազեցմանն ուղղված հանրային իրազեկում | | | | | |
| **ՀՀ Արտակարգ իրավիճակիների նախարարություն** | | | | | | |
| 43. | Պատերազմական գործողությունների արդյունքում տուժած ընտանիքների երեխաների համար (հատկապես կյանքի դժվարին իրավիճակում հայտնված) կրթամշակութային գործընթացներում նպաստավոր պայմանների ստեղծում՝ նրանց անվճար հիմունքներով ընդգրկումն ԱԻՆ Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայի Մշակույթի կենտրոնում գործող խմբակներում | Արտակարգ իրավիճակների նախարարություն | Երեխաների համար կստեղծվի սոցիալականացման, ներառական կրթության կարևորության, քաղաքացիական գիտակցության բարձրացման, մ**շակութային արժեքներին հաղորդակցվելու հնարավորություն,** ինչը կնպաստի գիտելիքների ձեռքբերմանը, ինտեգրմանը, նրանց անհատականության դրսևորմանը, տաղանդի, մտավոր և ֆիզիկական ունակությունների հայտնաբերմանն ու զարգացմանը | 2022 թվականի ընթացքում | Իրազեկված հասարակություն, խմբակների հավաքագրում (թվով մինչև 20 երեխաների ընդգրկում համապատասխան խմբակներում), ինտեգրում, զարգացում, պաշտպանվածություն | Ֆինանսական միջոցներ չեն պահանջվում |
| 44. | Կրթական գործընթացում երեխաների անվտանգության մշակույթի ձևավորման հարցերի շուրջ գիտելիքների փոխանցում և վարքականոնների վերաբերյալ նյութերով ապահովում | Արտակարգ իրավիճակների նախարարություն | Երեխաների անվտանգության մշակույթի ձևավորում. գիտելիքների ձեռքբերում, վարքականոնների գործնական կարողություններ, հմտությունների զարգացում | 2022 թվականի ընթացքում | Իրազեկված հասարակություն, պաշտպանված երեխաներ, էլեկտրոնային գրադարանի ներդնում (ուղեցույցեր, գրքույկներ, ԱՌՆ գրքեր, սոցիալական ռոլիկներ,տեսանյութեր), ԱԻՆ կայքում էլեկտրոնային գրադարանի տեղադրում | Ֆինանսական միջոցներ չեն պահանջվում |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | և կայքին հղման տրամադրում թվով 500-ից ավելի ՀՀ դպրոցներին | |
| 45. | Կրթական հաստատությունների աշխատակիցների, աշակերտների, ՏԻՄ մարմինների կրթության, մշակույթի բաժինների աշխատակիցների, սոցիալական ապահովության ծառայության տարածքային ստորաբաժանումների աշխատակիցների վերապատրաստման դասընթացներ | Արտակարգ իրավիճակների նախարարություն | Երեխաների (հատկապես կյանքի դժվարին իրավիճակում հայտնված) անվտանգության մշակույթի ձևավորման հարցերի շուրջ գիտելիքների փոխանցում, ինչը կնպաստի նրանց սոցիալականացմանը, քաղաքացիական գիտակցության բարձրացմանը, շրջակա միջավայրի պահպանության նշանակության վերաբերյալ գիտելիքների ավելացմանը | 2022 թվականի ընթացքում | Թվով մինչև 50 աշխատակիցների ներգրավում վերապատրաստման դասընթացներին | Ֆինանսական միջոցներ չեն պահանջվում |
| 46. | ԱԻՆ ՓԾ տարածքային ստորաբաժանումների ծառայողների և ՀՀ մարզպետարանների կրթության և գիտության ոլորտի մասնագետների հետ կրթական հաստատություններում (դպրոցներում) պատանի (12-17 տարեկան) հրշեջ-փրկարարական խմբերի ստեղծման գործընթացի կազմակերպում | Արտակարգ իրավիճակների նախարարություն ՀՀ մարզպետարաններ | Հասարակական և անձնական անվտանգության հարցերի նկատմամբ աճող սերնդի մոտ պատասխանատվության և գիտակից վերաբերմունքի ձևավորում, էքստրեմալ իրավիճակներում կողմնորոշում, գործնական գիտելիքների ստացում, առողջ ապրելակերպի, երիտասարդ սերնդի ֆիզիկական, հոգեբանական զարգացում | 2022 թվականի ընթացքում | ՀՀ բոլոր մարզերում մեկական հավաքական խմբերի ստեղծում | ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 47. | ՀՀ տարածքում երկրաշարժի և դրա հետևանքով առաջացած երկրորդային վտանգների բացահայտում | Արտակարգ իրավիճակների նախարարություն | Երեխաների անվտանգության մակարդակի բարձրացում արտակարգ իրավիճակներում | 2022 թվականի ընթացքում | Արդյունքների վերաբերյալ թվով 4 հաշվետվու-թյունների առկայություն | Ֆինանսական միջոցներ չեն պահանջվում |
| 48. | Հաշմանդամություն ունեցող երեխաների ուսուցում՝ սեյսմապաշտպանության վարքականոնների վերաբերյալ | Արտակարգ իրավիճակների նախարարություն | Հաշմանդամություն ունեցող երեխաների դիմակայունության բարձրացում արտակարգ իրավիճակներում | 2022 թվականի ընթացքում | Մասնագիտացված դասընթացներ առնվազն թվով 100 երեխաների համար | Ֆինանսական միջոցներ չեն պահանջվում |
| | **ՀՀ ոստիկանություն** | | | | | |
| 49. | Կազմակերպել և ոստիկանության տարածքային ստորաբաժանումների կողմից անցկացնել ստուգայց շրջագայություններ | ՀՀ ոստիկանություն | Երեխաների շահագործման կամ մուրացկանության մեջ ներգրավման դեպքերի կանխարգելում, բացահայտում | 2022 թվականի ընթացքում | Շահագործման, ինչպես նաև մուրացկանության մեջ ներգրավված անչափահասների թվաքանակի նվազում | Ֆինանսական միջոցներ չեն պահանջվում |
| 50. | Ոստիկանության իրավասու ծառայողների կողմից սպասարկվող հանրակրթական դպրոցներում, ինչպես նաև այլ ուսումնական հաստատություններում սովորողների շրջանում կազմակերպել և անցկացնել տարբեր իրավական թեմաներով զրույցներ | ՀՀ ոստիկանություն | Անչափահասների շրջանում իրավական գիտելիքների բարձրացում, հանցագործությունների և իրավախախտումների վերաբերյալ իրազեկվածություն | 2022 թվականի ընթացքում | Անչափահասների կողմից կատարվող հանցագործությունների թվի նվազում | Ֆինանսական միջոցներ չեն պահանջվում |
| 51. | Ոստիկանության իրավասու ծառայողների կողմից հանրակրթական դպրոցների աշակերտների ծնողների և մանկավարժների շրջանում կազմակերպել զրույցներ, հանդիպումներ | ՀՀ ոստիկանություն | Ծնողները կտեղեկացվեն անչափահասների շրջանում տարածված արտավոր երևույթներին, հանցագործություններին և իրավախախտումներին | 2022 թվականի ընթացքում | Իրազեկված քաղաքացիների թվաքանակի աճ | Ֆինանսական միջոցներ չեն պահանջվում |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 52. | Բռնությունը կանխարգելող տեսանյութերի հեռարձակում | ՀՀ ոստիկանություն | Բռնության ցանկացած ձևից երեխաների պաշտպանություն, իրազեկված քաղաքացիների թվաքանակի աճ | 2022 թվականի ընթացքում | Թեմատիկ 1 ռեպորտաժ, որը կհեռարձակվի Հ1 և Արմենիա հեռուստաընկերություննե րով և 2 սոցիալական տեսահոլովակ, որոնք պարբերաբար կշրջանառվեն սոցիալական ցանցերում և կհեռարձակվեն Ոստիկանական հաղորդումներ ունեցող հեռուստաընկերո ւթյուններով: | Ֆինանսական միջոցներ չեն պահանջվում |
| 53. | Ոստիկանության մասնագիտացված ստորաբաժանումների իրավասու ծառայողների համար կազմակերպել և անցկացնել վերապատրաստման դասընթացներ | ՀՀ ոստիկանություն | Ոստիկանության իրավասու ծառայողների կարողությունների հզորացում | 2022 թվականի ընթացքում | Վերապատրաստված 30 ոստիկանության ծառայողներ | ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ |
| ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ | | | | | | |
| 54. | Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների ու նրանց ընտանիքների հայտնաբերում և «Մանուկ» տեղեկատվական համակարգում տվյալների համալրում | ՀՀ Արագածոտնի մարզպետարան | Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների թվի նվազում, նրանց շահերի պաշտպանությանն ուղղված իրականացված ծրագրեր | 2022 թվականի ընթացքում | Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների հաշվառման «Մանուկ» տեղեկատվական համակարգում ընդգրկված երեխաների 90 % տվյալների ամբողջականությունն ապահովված է | Ֆինանսական միջոցներ չեն պահանջվում |
| 55. | 2020 թվականի Արցախյան պատերազմի հետևանքով տուժած, այդ թվում՝ տեղահանված ընտանիքներին և նրանց | ՀՀ Արագածոտնի մարզպետարան | Երեխաները ներառվել են հասարակական կյանք | 2022 թվականի ընթացքում | Պատերազմի հետևանքով տուժած և աջակցության կարիք ունեցող ընտանիքների երեխաների 90% ընդգրկում | ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | երեխաներին ուղղված աջակցության (սոցիալ-հոգեբանական, կրթական, առողջապահական) ծրագրերի իրականացման համակարգում | | | | հանրակրթական և առողջապահական ծրագրերում | |
| 56. | Հանրակրթությունից դուրս մնացած, այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող, ինչպես նաև աշխատող երեխաների կրթության իրավունքի վերականգնմանն ուղղված աշխատանքների իրականացում | ՀՀ Արագածոտնի մարզպետարան | Հանրակրթությունից դուրս մնացած երեխաների թվի նվազում | 2022 թվականի ընթացքում | 2021 թ. հանրակրթությունից դուրս մնացած երեխաների առնվազն 70%-ի ընդգրկում պարտադիր ուսուցման մեջ | Ֆինանսական միջոցներ չեն պահանջվում |
| 57. | Համայնքներում խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների քարտուղարների և անդամների վերապատրաստումների իրականցում | ՀՀ Արագածոտնի մարզպետարան | Բարելավվել է խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների աշխատանքի որակը | 2022 թվականի ընթացքում | Վերապատրաստաված են մարզի ԽՀՀ անդամների առնվազն 60%-ը | ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ |
| 58. | Աջակցություն երեխաների իրավունքների պաշտպանությանն ուղղված՝ երեխաների մասնակցությունն ապահովող միջոցառումների իրականացմանը | ՀՀ Արագածոտնի մարզպետարան | Երեխաները իրազեկված են և տիրապետում են մասնակցային գործիքներին՝ իրենց ձայնը լսելի դարձնելու համար | 2022 թվականի ընթացքում | Իրականացված միջոցառումներում ընդգրկված է շուրջ 1000 երեխա | ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ |
| 59. | Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների ընտանիքների համար ծնողավարման հմտությունների, կենցաղավարման | ՀՀ Արագածոտնի մարզպետարան | Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների խնամքի որակի բարելավում | 2022 թվականի ընթացքում | Կանխարգելվել է 20 երեխայի մուտքը բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություններ | ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | թեմաներով դասընթացների կազմակերպմանն աջակցություն | | | | | |
| 60. | Մարզում խնամատարությանն ուղղված իրազեկման արշավների կազմակերպում | ՀՀ Արագածոտնի մարզպետարան | Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների խնամքն ու դաստիարակությունը կազմակերպված է ընտանիքներում | 2022 թվականի ընթացքում | Մարզում խնամատար ծնող դառնալ ցանկացող անձանց թիվն ավելացել է առնվազն հինգով | ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ |
| 61. | Մարզի դպրոցների, ուսումնական հաստատությունների աշխատակազմերի, համայնքների խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների անդամների համար ընտանեկան բռնության, ինչպես նաև երեխաների հանդեպ բռնության բոլոր դրսևորումների, դրանց կանխարգելմանն ուղղված թեմաներով դասընթացների, իրազեկման միջոցառումների կազմակերպում և իրականացում | ՀՀ Արագածոտնի մարզպետարան | Բռնության ենթարկված երեխաների թվի նվազում | 2022 թվականի ընթացքում | Նախորդ տարվա համեմատ բռնության ենթարկված երեխաների թիվը նվազել է առնվազն 25%-ով | ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ |
| 62. | Հաշմանդամություն ունեցող երեխաների սոցիալականացմանն ու հասարակություն ինտեգրմանն ուղղված աշխատանքների իրականացում | ՀՀ Արագածոտնի մարզպետարան | Հաշմանդամություն ունեցող երեխաների քաղաքացիական գիտակցության բարձրացում | 2022 թվականի ընթացքում | Հաշմանդամություն ունեցող 10 երեխայի համար կազմակերպված է առողջարանային բուժում, ապահովված է հաշմանդամություն ունեցող երեխաների ընդգրկվածություն սպորտային և | ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | մշակութային միջոցառումներում | |
| 63. | Աշակերտների և ծնողների համար կազմակերպել քննարկումների կազմակերպում՝ երեխաների իրավունքների պաշտպանությանն առնչվող թեմաներով /երեխայի իրավունք, ընտանեկան բռնություն, թրաֆիքինգ, վնասակար սովորությունների դեմ պայքար, կյանքի համար վտանգավոր համացանցային խաղեր/ | ՀՀ Արագածոտնի մարզպետարան | Անչափահասների շրջանում իրավական գիտելիքների մակարդակի բարձրացում, ինչի արդունքում կնվազի նրանց կողմից կատարվող իրավախախտումների թիվը: Ծնողները կտեղեկացվեն անչափահասների կողմից կատարվող իրավախախտումներին, ընտանիքում կատարվող բռնություններին և դրա ուղղությամբ տարվող պաշտպանական միջոցներին: | 2022 թվականի ընթացքում | Աշակերտների, ծնողների իրավական գիտելիքների մակարդակի և հակաօրինական արարքների մասին իրազեկվածության բարձրացմանն ուղղված 20 հանդիպում | Ֆինանսական միջոցներ չեն պահանջվում |
| 64. | Կազմակերպել տնայցեր հակահասարակական վարք դրսևորող, մուրացիկ-թափառաշրջիկ, կրթությունից դուրս մնացած երեխաների ընտանիքներ | ՀՀ Արագածոտնի մարզպետարան | Անչափահասների շահագործման, հանցագործությունների մեջ ներգրավման դեպքերի կանխարգելում, բացահայտում | 2022 թվականի ընթացքում | Անչափահասների կողմից և անչափահասների նկատմամբ կատարվող հանցագործությունների թվի կանխարգելման նպատակով իրականացված է 20 տնայց | Ֆինանսական միջոցներ չեն պահանջվում |
| **ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ** | | | | | | |
| 65. | Երեխաների խնամքի ցերեկային ծառայությունների տրամադրման աջակցություն, երեխաների ուղղորդում ցերեկային խնամքի կենտրոններ | ՀՀ Արարատի մարզպետարան | Գնահատված կարիքների հիման վրա կյանքի դժվարին իրավիճակում հայտնված և առողջական խնդիրներ ունեցող երեխաների ուղղորդում ցերեկային կենտրոններ | 2022 թվականի ընթացքում | Մարզում գործող ցերեկային խնամքի ծառայություններից շուրջ 300 երեխաների կտրամադրվի վերականգնողական, սոցիալ-հոգեբանական աջակցություն | Ֆինանսական միջոցներ չեն պահանջվում |
| 66. | Երեխայի ընտանիքում ապրելու իրավունքի | ՀՀ Արարատի մարզպետարան | Երեխայի ընտանիքում ապրելու և շուրջօրյա խնամք և | 2022 թվականի ընթացքում | Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված | ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | իրացմանն ուղղված միջոցների ձեռնարկում | | պաշտպանություն իրականացնող հաստատությունում հայտնվելու ռիսկի նվազեցում | | երեխաների ընտանիքից դուրս խնամք ստանալու ռիսկը կանխարգելված դեպքերի թիվը | |
| 67. | Երեխաների իրավունքների պաշտպանության օրվա կապակցությամբ անցկացվող միջոցառումներին սոցիալապես խոցելի խմբերի ընտանիքների երեխաների մասնակցության ապահովում | ՀՀ Արարատի մարզպետարան, ՏԻՄ, ուսումնական հաստատություններ, ՀԿ-ներ /համաձայնությամբ/ | Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների լիարժեք մասնակցություն միջոցառումներին | 2022 թվականի ընթացքում | Շուրջ 500 սոցիալապես խոցելի խմբերի ընտանիքների երեխաների թիվ, որոնք մասնակցել են միջոցառումներին | ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ |
| **ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ** | | | | | | |
| 68. | Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների անդամներին դեպքի վարման առանձնահատկություն-ների ուսուցման իրականացում | ՀՀ Արմավիրի մարզպետարան, տեղական ինքնակառավարման մարմիններ (ՏԻՄ), ՀԿ-ներ | Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի անդամների վերապատրաստում | 2022 թվականի ընթացքում | Վերապատրաստում անցած խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների թիվ | ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ |
| 69. | Պատերազմական գործողություններից տուժած ընտանիքների երեխաների կրթության իրավունքի ապահովմանն ուղղված աշխատանքների իրականացում | ՀՀ Արմավիրի մարզպետարան, մարզի ուսումնական հաստատություններ, ՀԿ-ներ | Պատերազմական գործողություններից տուժած ընտանիքների երեխաների ընդգրկվածություն մարզի հանրակրթական դպրոցներ, միջին մասնագիտական ուսումնական հաստատություններ | 2022 թվականի ընթացքում | Շուրջ 396 երեխաների կրթության իրավունքի իրացում | ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ |
| 70. | Մարզում գործող դպրոցներում հանդիպումների, իրավական թեմաների շուրջ տարբեր զրույց-զեկույցների կազմակերպում | ՀՀ Արմավիրի մարզպետարան, մարզի դպրոցներ, Ոստիկանություն | Անչափահասների ընդգրկում մշակութային կյանքում, նրանց շրջանում իրավական գիտելիքների մարկարդակի բարձրացում | 2022 թվականի ընթացքում | Իրավական թեմաների շուրջ կազմակերպված հանդիպումներին մասնակցած անչափահասների թիվ | Ֆինանսական միջոցներ չեն պահանջվում |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 71. | Բռնության ցանկացած ձևից երեխաների պաշտպանությանն ուղղված հանդիպումների և քննարկումների կազմակերպում | ՀՀ Արմավիրի մարզպետարան | Անչափահասների կողմից բռնության երևույթի գիտակցման և իրազեկվածության բարձրացում | 2022 թվականի ընթացքում | Բռնության ցանկացած ձևից երեխաների պաշտպանությանն ուղղված հանդիպումների և քննարկումներին մասնակցած անչափահասների թիվ | Ֆինանսական միջոցներ չեն պահանջվում |
| 72. | Հանրակրթությունից դուրս մնացած երեխաների հայտնաբերման և կրթական գործընթացում ընդգրկման աշխատանքների իրականացում | ՀՀ Արմավիրի մարզպետարան, մարզի դպրոցներ, համայնքների ԽՀՀ-ներ | Հանրակրթությունից դուրս մնացած երեխաների թվի նվազեցում | 2022 թվականի ընթացքում | Հանրակրթության և պարտադիր ուսուցման մեջ 6-18 տարեկան երեխաների 100% ընդգրկվածություն | Ֆինանսական միջոցներ չեն պահանջվում |
| 73. | Երեխայի՝ ընտանիքում ապրելու իրավունքի իրացմանն ուղղված միջոցների ձեռնարկում | ՀՀ Արմավիրի մարզպետարան, համայնքային առողջապահական հաստատություններ, համայնքների ԽՀՀ-ներ | Երեխայի ընտանիքում ապրելու և շուրջօրյա խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատությունում հայտնվելու ռիսկի նվազեցում | 2022 թվականի ընթացքում | Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների ընտանիքից դուրս խնամք ստանալու ռիսկը կանխարգելված դեպքերի թիվը | ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ |
| 74. | Երեխաների իրավունքների պաշտպանության օրվա կապակցությամբ անցկացվող միջոցառումներին սոցիալապես խոցելի խմբերի ընտանիքների երեխաների մասնակցության ապահովում | ՀՀ Արմավիրի մարզպետարան, ՏԻՄ, ուսումնական հաստատություններ, ՀԿ-ներ /համաձայնությամբ/ | Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների լիարժեք մասնակցություն միջոցառումներին | 2022 թվականի ընթացքում | Միջոցառմանն ընդգրկված շուրջ 500 սոցիալապես խոցելի խմբերի ընտանիքների երեխաների թիվ | ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ |
| 75. | Հաշմանդամություն ունեցող երեխաների սոցիալականացման և հասարակական կյանքում ինտեգրվելուն ուղղված միջոցառումների իրականացում | ՀՀ Արմավիրի մարզպետարան /ՀԿ-ներ /համաձայնությամբ/ | Հաշմանդամություն ունեցող երեխաների հասարակության մեջ որպես լիարժեք անդամի գիտակցության ձևավորում | 2022 թվականի ընթացքում | Ձեռնարկված միջոցառումների արդյունքում՝ մշակութային, սպորտային և այլ խմբակներում ընդգրկված հաշմանդամություն ունեցող երեխաների թիվ | ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 76. | Առավել խոցելի խմբերի դպրոցականների ամառային հանգստի կազմակերպման աշխատանքների համակարգում | ՀՀ Արմավիրի մարզպետարան | Ամառային ճամբարներում և հանգստյան տներում սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների ամառային հանգստի կազմակերպում | 2022 թվականի ընթացքում | Մարզի շուրջ 300 կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների հանգստի կազմակերպման նպատակով աջակցության ցուցաբերում | Ֆինանսական միջոցներ չեն պահանջվում |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| **ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ** | | | | | | |
| 77. | Ընտանիքում ապրելու և դաստիարակվելու երեխայի իրավունքի ապահովում: Կյանքի դժվարին իրավիճակներում հայտնված երեխաների և նրանց ընտանիքների հայտնաբերում, ուսումնասիրում, սոցիալ-հոգեբանական վերականգնողական անհատական ծրագրերի կազմում և «Մանուկ» տեղեկատվական բազայում տվյալների համալրում | Գեղարքունիքի մարզպետարան | Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների հայտնաբերում և տվյալների մուտքագրում «Մանուկ» տեղեկատվական համակարգ | 2022 թվականի ընթացքում | Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների հաշվառման «Մանուկ» տեղեկատվական համակարգում ընդգրկված երեխաների 90% տվյալների ամբողջականությունն ապահոված է | Ֆինանսական միջոցներ չեն պահանջվում |
| 78. | 2020 թվականի պատերազմական գործողությունների արդյունքում տուժած և տեղահանված ընտանիքների երեխաներին և նրանց ընտանիքներին ուղղված աջակցության (սոցիալ-հոգեբանական, կրթական, մշակութային առողջապահական) ծրագրերի մշակման և | Գեղարքունիքի մարզպետարան | Պատերազմական գործողությունների տուժված ընտանիքների երեխաներն ընդգրկվել են մարզի հանրակրթական դպրոցներ | 2022 թվականի ընթացքում | Շուրջ 160 երեխաների կրթության իրավունքի իրացում | ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | իրականացման գործընթացների օժանդակություն | | | | | |
| 79. | Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների վկայագրում | Գեղարքունիքի մարզպետարան | Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների կրթության իրավունքի իրացում | 2022 թվականի ընթացքում | Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների թվի համապատասխանու-թյունը վկայագրված երեխաների թվում, ընթացիկ տարում վկայագրված երեխաների թիվ | Ֆինանսական միջոցներ չեն պահանջվում |
| 80. | Աջակցում ապօրինի կերպով երեխաներին աշխատանքում ներգրավման դեպքերի կանխարգելման նպատակով իրազեկման միջոցառումների իրականացմանը, ինչպես նաև դեպքերի հայտնաբերմանը | Գեղարքունիքի մարզպետարան | Ապօրինի կերպով աշխատանքներում ներգրավված երեխաների թվի նվազում | 2022 թվականի ընթացքում | Իրականացված միջոցառումների թիվ Բացահայտված դեպքերի թիվ | ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ |
| 81. | Համայնքներում խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների քարտուղարների, անդամների և երեխաների հետ աշխատող մասնագետների վերապատրաստումների իրականցման աջակցություն | Գեղարքունիքի մարզպետարան | Մասնագետներին խորհրդատվության տրամադրում: | 2022 թվականի ընթացքում | Կազմակերպված վերապատրաստումների թիվ, վերապատրաստված մասնագետների թիվ | ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ |
| 82. | Երեխաների իրավունքների պաշտպանությանն ուղղված՝ երեխաների մասնակցությունն ապահովող | Գեղարքունիքի մարզպետարան | Ապահովել միջոցառումների իրականացումը երեխաների Իրավունքների մասով իրազեկվածության բարձրացմանը: | 2022 թվականի ընթացքում | Իրականացված միջոցառումներում ընդգրկված է 750 երեխա | ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | միջոցառումների իրականացում /հունիսի 1/ | | | | | |
| 83. | Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների ընտանիքների համար ծնողավարման, կենցաղավարման թեմաներով դասընթացների կազմակերպում | Գեղարքունիքի մարզպետարան | Ծնողավարման հմտությունների բարելավում և իրավական գիտելիքների բարձրացում: | 2022 թվականի ընթացքում | Քննարկումներին և դասընթացներին մասնակցել են 105 ընտանիքներ | ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ |
| 84. | Մարզում խնամատարությանն ուղղված իրազեկման աշխատանքների իրականացում | Գեղարքունիքի մարզպետարան | Մարզում խնամատար ընտանիքների խրախուսում, թվի ավելացում | 2022 թվականի ընթացքում | Առնվազն 2 խնամատար ընտանիքների առկայություն | ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ |
| 85. | Աջակցում է մարզի հանրակրթական ուսումնական հաստատությունների աշխատակազմերի, համայնքների խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների անդամների համար ընտանեկան բռնության, ինչպես նաև երեխաների հանդեպ բռնության բոլոր դրսևորումների, դրանց կանխարգելմանն ու բռնության ցանկացած ձևից երեխաների պաշտպանությանն ուղղված թեմաներով դասընթացների, իրազեկման միջոցառումների կազմակերպում և իրականացում | Գեղարքունիքի մարզպետարան | Բռնության ենթարկված երեխաների և ընտանիքների իրազեկվացության բարձրացում: | 2022 թվականի ընթացքում | Կազմակերպվել է շուրջ 8 միջոցառումներ՝ մասնակցությամբ 150 երեխաների | ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ | | | | | | |
| 86. | 2020 թվականի պատերազմական գործողությունների արդյունքում տուժած և տեղահանված ընտանիքների երեխաներին և նրանց ընտանիքներին ուղղված աջակցության (սոցիալ-հոգեբանական, կրթական, մշակութային առողջապահական) ծրագրերի մշակման և իրականացման գործընթացների օժանդակություն | Լոռու մարզպետարան | Պատերազմական գործողությունների տուժված ընտանիքների երեխաներն ընդգրկվել են մարզի հանրակրթական դպրոցներ | 2022 թվականի ընթացքում | Պատերազմի հետևանքով տուժած ընտանիքների երեխաների թիվը, որոնց համար ապահովվել է կրթական իրավունքի իրացումը | ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ |
| 87. | Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների և նրանց ընտանիքների հայտնաբերում և «Մանուկ» տեղեկատվական բազայում տվյալների համալրում | Լոռու մարզպետարան | Ապահովված է երեխաների տվյալների մուտքագրումը | 2022 թվականի ընթացքում | Մուտքագրված ԿԴԻԳ երեխաների առնվազն 90%-ի անձնական տվյալների ամբողջականությունն ապահովված է | Ֆինանսական միջոցներ չեն պահանջվում |
| 88. | Երեխաների աշխատանքային շահագործման դեպքերի բացահայտում, կանխարգելում | Լոռու մարզպետարան | Հայտնաբերված դեպքերը հաշվառված են ոստիկանության համապատասխան բաժնի կողմից և «Մանուկ» տեղեկատվական համակարգում | 2022 թվականի ընթացքում | «Մանուկ» տեղեկատվական համակարգում և ոստիկանությունում հաշվառված դեպքերի թվի համընկնումը | Ֆինանսական միջոցներ չեն պահանջվում |
| 89. | Ապահովել մարզի դպրոցների, ուսումնական | Լոռու մարզպետարան | Դպրոցներում իրականացվել են դասընթացներ | 2022 թվականի ընթացքում | Դասընթացների թիվը՝ 8, մասնակիցների թիվը՝ 240 | ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | հաստատությունների համար ընտանեկան բռնության, ինչպես նաև երեխաների հանդեպ բռնության բոլոր դրսևորումների, դրանց կանխարգելմանն ուղղված թեմաներով դասընթացների, իրազեկման միջոցառումների կազմակերպումն ու իրականացումը | | | | | |
| 90. | Հանրակրթությունից դուրս մնացած երեխաների հայտնաբերման և կրթական գործընթացում ընդգրկման աշխատանքների իրականացում | Լոռու մարզպետարան | Հանրակրթությունից դուրս մնացած երեխաների թվի նվազեցում | 2022 թվականի ընթացքում | 6-18 տարեկան երեխաների 100% ընդգրկվածություն հանրակրթության մեջ | Ֆինանսական միջոցներ չեն պահանջվում |
| 91. | Մարզում խնամատարությանն ուղղված իրազեկման միջոցառումների կազմակերպման աջակցություն, խնամատարության վերահսկողություն | Լոռու մարզպետարան | Խնամատար ծնող դառնալ ցանկացող անձանց թվի աճ, խնամատար ընտանիքներում հոգեզավակների բավարար խնամք և դաստիարակություն | 2022 թվականի ընթացքում | Խնամատար ծնող դառնալու ցանկություն հայտնածների թիվ՝ 6<br>Խնամատար ընտանիքների թիվ՝ 24<br>Հոգեզավակների թիվ՝ 33 | ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ |
| 92. | Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի անդամներին դեպքի վարման առանձնահատկություններ ի ուսուցման կազմակերպում | Լոռու մարզպետարան | Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի վերապատրաստած անդամներ | 2022 թվականի ընթացքում | Ուսուցում անցած Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների թիվը՝ 8 /վերապատրաստում/, 40 մասնակից | ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ |
| 93. | Երեխայի ընտանիքում ապրելու իրավունքի | Լոռու մարզպետարան | Երեխայի ընտանիքում ապրելու և շուրջօրյա խնամք և պաշտպանություն | 2022 թվականի ընթացքում | Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների ընտանիքից | ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | իրացմանն ուղղված միջոցների ձեռնարկում | | իրականացնող հաստատությունում հայտնվելու ռիսկի նվազեցում | | դուրս խնամք ստանալու ռիսկը կանխարգելված դեպքերի թիվը | |
| | | | **ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ** | | | |
| 94. | Մարզի կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների և նրանց ընտանիքների տվյալների ամբողջական մուտքագրումը «Մանուկ» տեղեկատվական համակարգ | Կոտայքի մարզպետարան | Ապահովել կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների և նրանց ընտանիքների տվյալների ամբողջական հաշվառումը «Մանուկ» տեղեկատվական համակարգ | 2022 թվականի ընթացքում | «Մանուկ» տեղեկատվական համակարգում հաշվառված կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների թիվը | Ֆինանսական միջոցներ չեն պահանջվում |
| 95. | 2020 թվականի պատերազմական գործողությունների արդյունքում տուժած և տեղահանված ընտանիքների երեխաներին և նրանց ընտանիքներին ուղղված աջակցության (սոցիալ-հոգեբանական, կրթական, մշակութային առողջապահական) ծրագրերի մշակման և իրականացման գործընթացների օժանդակություն | Լոռու մարզպետարան | Պատերազմական գործողությունների տուժված ընտանիքների երեխաներն ընդգրկվել են մարզի հանրակրթական դպրոցներ | 2022 թվականի ընթացքում | Պատերազմի հետևանքով տուժած ընտանիքների երեխաների թիվը, որոնց համար ապահովվել է կրթական իրավունքի իրացումը | ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ |
| 96. | Հանրակրթությունից դուրս մնացած երեխաների հայտնաբերում և կրթական իրավունքի վերականգնում, այդ թվում՝ նաև կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների /ԿԱՊԿՈՒ/ | Կոտայքի մարզպետարան | Ապառովել հանրակրթությունից դուրս մնացած երեխաների վերադարձը հանրակրթական ուսումնական հաստատություններ | 2022 թվականի ընթացքում | Կրթական իրավունքը վերականգնված երեխաների թիվը, այդ թվում՝ նաև ԿԱՊԿՈՒ երեխաներ | Ֆինանսական միջոցներ չեն պահանջվում |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 97. | Աշխատող երեխաների, այդ թվում՝ երեխաների աշխատանքային շահագործման դեպքերի բացահայտում, տվյալների փոխանցում ոստիկանության ԱԳԲ-ներին | Կոտայքի մարզպետարան | Ապահովել անչափահաս երեխաների աշխատանքային շահագործման հայտնաբերված դեպքերի հաշվառումը «Մանուկ» տեղեկատվական համակարգ և ոստիկանության շտեմարան | 2022 թվականի ընթացքում | «Մանուկ» տեղեկատվական համակարգում և ոստիկանության շտեմարանում հաշվառված երեխաների թիվը | Ֆինանսական միջոցներ չեն պահանջվում |
| 98. | Քաղաքային և խոշորացված համայնքներում խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների քարտուղարների, անդամների և երեխաների հետ աշխատող մասնագետների վերապատրաստումների իրականցում | Կոտայքի մարզպետարան | Վերապատրաստումներին խնակալության և հոգաբարձության հանձնաժողովների անդամների և երեխաների հետ աշխատող մասնագետների մասնակցության ապահովում: | 2022 թվականի ընթացքում | Վերապատրաստմանը մասնակցած խնակալության և հոգաբարձության հանձնաժողովների անդամների և երեխաների հետ աշխատող մասնագետների թիվը, վերապատրաստումների քանակը | ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ |
| 99. | Աջակցություն երեխաների իրավունքների պաշտպանությանն ուղղված միջոցառումների իրականացմանը և  կյանքի դժվարին իրավիճակում հայտնված, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող երեխաների մասնակցության ապահովմանը | Կոտայքի մարզպետարան | Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող երեխաների իրազեկում: | 2022 թվականի ընթացքում | Իրականացված միջոցառումների թիվ և դրանցում ընդգրկված կյանքի դժվարին իրավիճակում հայտնված այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող երեխաների թիվը | ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ |
| 100. | Աջակցություն կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների ընտանիքների համար ծնողավարման, կենցաղավարման թեմաներով | Կոտայքի մարզպետարան | Ծնողավարման, կենցաղավարման թեմաներով դասընթացների իրականացում: | 2022 թվականի ընթացքում | Կազմակերպված դասընթացների թիվը, դասընթացներին մասնակցած քաղաքացիների թիվը | ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | դասընթացների կազմակերպմանը | | | | | |
| 101. | Աջակցություն մարզում խնամատար ընտանիքում խնամվող երեխաների խնամքի կազմակերպման հնարավորությունների մասին իրազեկման աշխատանքների իրականացմանը | Կոտայքի մարզպետարան | Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների խնամքի և դաստիարակության կազմակերպում ընտանիքում: | 2022 թվականի ընթացքում | Ընթացիկ տարում խնամատար ծնող դառնալ ցանկացող հաշվառված թիվը | ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ |
| 102. | Մարզի հանրակրթական ուսումնական հաստատությունների աշխատակազմերի, համայնքների խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների անդամների համար ընտանեկան բռնության, ինչպես նաև երեխաների հանդեպ բռնության բոլոր դրսևորումների, դրանց կանխարգելմանն ու բռնության ցանկացած ձևից երեխաների պաշտպանությանն ուղղված թեմաներով դասընթացների, իրականացում | Կոտայքի մարզպետարան | Ապահովել հանրակրթական ուսումնական հաստատությունների աշխատակազմերի, խնամակալության և հոգաբարձության հանձածժովների անդամների համար դասընթացների իրականացումը: | 2022 թվականի ընթացքում | Իրականացված դասընթացների թիվը, դասընթացներին մասնակցություն ունեցած անձանց թիվը | ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ |
| **ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ** | | | | | | |
| 103. | Երեխաների շահագործման, այդ թվում՝ ապօրինի կերպով աշխատանքում ներգրավման դեմ պայքար | ՀՀ Շիրակի մարզպետարան | Երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում հանդիպում-քննարկումների կազմակերպում, | 2022 թվականի ընթացքում | Հանդիպում-քննարկումների թիվը | Ֆինանսական միջոցներ չեն պահանջվում |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | շահագործման և ապօրինի աշխատանքում ներգրավման ռիսկերի իրազեկում | | | |
| 104. | Բռնության ցանկացած ձևից երեխաների պաշտպանությանն ուղղված միջոցառումների իրականացում | ՀՀ Շիրակի մարզպետարան | Երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում բռնության տեսակների և բռնության դեպքում իրազեկման մեխանիզմի իրազեկում, արձանագրված բռնության դեպքերի լուծմանն ուղղված քննարկումների կազմակերպում՝ շահագրգիռ կողմերի մասնակցությամբ | 2022 թվականի ընթացքում | Հանդիպումների, քննարկված դեպքերի թիվը | Ֆինանսական միջոցներ չեն պահանջվում |
| 105. | Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների ընտանիքների տնտեսական հզորացմանն ուղղված միջոցների ներդրում | ՀՀ Շիրակի մարզպետարան | Գնահատված կարիքների հիման վրա շահագրգիռ կողմերի մասնակցությամբ քննարկումների կազմակերպում, միջամտության պլանի արդյունավետության գնահատում | 2022 թվականի ընթացքում | Անհատական միջամտության պլաների, միջոցառումների թիվ | Ֆինանսական միջոցներ չեն պահանջվում |
| 106. | Կրթությունից դուրս մնացած երեխաների հայտնաբերում և ընդգրկում կրթական գործընթացում | ՀՀ Շիրակի մարզպետարան | Բացահայտված պարտադիր ուսուցումից դուրս մնացած երեխաների ներառում հանրակրթության մեջ | 2022 թվականի ընթացքում | Հանրակրթության մեջ ընդգրկված երեխաների թիվ | Ֆինանսական միջոցներ չեն պահանջվում |
| 107. | Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների գործունեության արդյունավետության բարձրացում | ՀՀ Շիրակի մարզպետարան | Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների  և ընտանիքների բարդ դեպքերի քննարկում, մեթոդական օժանդակության ցուցաբերում | 2022 թվականի ընթացքում | Քննարկումների, նիստերի թիվ | Ֆինանսական միջոցներ չեն պահանջվում |
| 108. | Երեխաների խնամքի ցերեկային | ՀՀ Շիրակի մարզպետարան | Գնահատված կարիքների հիման վրա կյանքի դժվարին իրավիճակում հայտնված և | 2022 թվականի ընթացքում | Ցերեկային կենտրոններ ուղղորդված երեխաների թիվ | Ֆինանսական միջոցներ չեն պահանջվում |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | ծառայությունների տրամադրում | | առողջական խնդիրներ ունեցող երեխաների ուղղորդում ցերեկային կենտրոններ | | | |
| 109. | Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաներին ժամանակավոր խնամքի տրամադրման ծառայություններ | ՀՀ Շիրակի մարզպետարան | Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների ուղղորդում ժամանակավոր խնամք տրամադրող կազմակերպություններ | 2022 թվականի ընթացքում | Ուղղորդված երեխաների թիվ | Ֆինանսական միջոցներ չեն պահանջվում |
| **ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ** | | | | | | |
| 110. | 2020 թվականի Արցախյան պատերազմի հետևանքով տուժած, այդ թվում՝ տեղահանված ընտանիքներին և նրանց երեխաներին ուղղված աջակցության (սոցիալական, կրթական) ծրագրերի իրականացում | ՀՀ Սյունիքի մարզպետարան | Պատերազմական գործողությունների արդյունքում Սյունիքի մարզում բնակություն հաստատած ընտանիքների երեխաների կրթության իրավունքի ապահովում, աջակցություն զոհված զինծառայողների երեխաների հանգստի ապահովման, ինչպես նաև սոցիալական աջակցության ծրագրերում ընդգրկվելու հարցում: | 2022 թվականի ընթացքում | Արցախից Սյունիքի մարզում բնակություն հաստատած ընտանիքների՝ կրթության իրավունքը ապահոված երեխաների թիվ, սոցիալական աջակցության ծրագրում ընդգրկված զոհված զինծառայողների երեխաների թիվ | ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ |
| 111. | Հանդիպում-քննարկումների կազմակերպում երեխաների իրավունքների պաշտպանության հարցերով զբաղվող շահագրգիռ կողմերի, այդ թվում՝ ԽՀՀ –ի անդամների հետ համատեղ արդյունավետ | ՀՀ Սյունիքի մարզպետարան | Երեխաների իրավունքների պաշտպանության հարցերով զբաղվող շահագրգիռ կողմերի, այդ թվում՝ ԽՀՀ –ի անդամների համատեղ աշխատանքների արդյունավետության բարձրացում | 2022 թվականի ընթացքում | Տարվա ընթացքում կազմակերպվող հանդիպում-քննարկումների թիվը | Ֆինանսական միջոցներ չեն պահանջվում |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | համագործակցությունը բարձրացնելու նպատակով | | | | | |
| 112. | Մարզում կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների հայտնաբերում և նրանց տվյալների մուտքագրում «Մանուկ» տեղեկատվական համակարգ | ՀՀ Սյունիքի մարզպետարան | Ապահովվում է մարզի կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների և նրանց ընտանիքների ամբողջական տվյալների մուտքագրումը: | 2022 թվականի ընթացքում | Տարվա ընթացքում մարզի կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների «Մանուկ» տեղեկատվական համակարգում մուտքագրվածների թիվը | Ֆինանսական միջոցներ չեն պահանջվում |
| 113. | Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող և հանրակրթությունից դուրս մնացած երեխաների կրթության իրավունքի ապահովում | ՀՀ Սյունիքի մարզպետարան | Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների վկայագրում: Կրթությունից դուրս մնացած երեխաների կրթության իրավունքի վերականգնում: | 2022 թվականի ընթացքում | Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող վկայագրված երեխաների թիվ, կրթության իրավունքը վերականգնված երեխաների թիվ | Ֆինանսական միջոցներ չեն պահանջվում |
| 114. | Մարզում խնամատար ծնողների հաշվառում, խնամատար ընտանիքների վերահսկողություն | ՀՀ Սյունիքի մարզպետարան | Բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություններում գտնվող երեխաների ընտանիքում ապրելու իրավունքի իրացում | 2022 թվականի ընթացքում | Մարզում հաշվառված խնամատար ընտանիքների և ընտանիքներում խնամվող երեխաների թիվ | Ֆինանսական միջոցներ չեն պահանջվում |
| 115. | Սոցիալապես անապահով ընտանիքների դպրոցահասակ երեխաների ամառային հանգստի կազմակերպման աջակցում | ՀՀ Սյունիքի մարզպետարան | Ամառային ճամբարներում սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների ամառային հանգստի կազմակերպում | 2022 թվականի ընթացքում | Ճամբարներում հանգիստը անցկացրած սոցիալապես անապահով երեխաների թիվ | ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ |
| 116. | Հաշմանդամություն ունեցող երեխաների սոցիալականացման և մշակութային արժեքներին հաղորդակցվելու միջոցառումների աջակցում | ՀՀ Սյունիքի մարզպետարան | Հաշմանդամություն ունեցող երեխաների մասնակցության ապահովումը մշակութային միջոցառումներին | 2022 թվականի ընթացքում | Մշակութային միջոցառումներին մասնակցած հաշմանդամություն ունեցող երեխաների թիվ | ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ |
| | | | ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ | | | |
| 117. | Արցախից ՀՀ Վայոց ձորի մարզ վերադարձած, | ՀՀ Վայոց ձորի մարզպետարան | Աջակցության տարբեր տեսակների հասանելիություն՝ | 2022 թվականի ընթացքում | Արցախից Վայոց ձորի մարզում բնակվող | ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | պատերազմում զոհված, անհայտ կորած և վիրավորում ստացած զինծառայողների ընտանիքների երեխաների կարիքների գնահատում, համապատասխան աջակցության և ծառայությունների տրամադրում, երեխաների կրթական իրավունքի իրացում | | դժվար վիճակում հայտնված ընտանիքների երեխաների համար | | ընտանիքների 30 երեխայի, զոհված, անհետ կորած և վիրավորում ստացած 25 զինծառայողների ընտանիքների երեխաներին կտրվի սոցիալական և հոգեբանական աջակցություն, կապահովվի 100 տոկոս երեխաների կրթական իրավունքի իրացումը | |
| 118. | Հետևողական աշխատանք անչափահաս աշխատող երեխաների հայտնաբերման, պատճառների ուսումնասիրման, կանխարգելիչ աշխատանքներ իրականացնելու ուղղությամբ | ՀՀ Վայոց ձորի մարզպետարան | Սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների և իրավախախտ անչափահասների իրավունքների պաշտպանություն և կարիքների բավարարում | 2022 թվականի ընթացքում | Բացահայտված դեպքերի թիվ<br><br>Ըստ վերհանված պատճառների՝ կազմված անհատական սոցիալական ծրագրերի թիվ | ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ |
| 119. | Աջակցություն բռնության ենթարկված երեխաներին, վերջիններիս իրավունքների և շահերի պաշտպանություն, իրավախախտ, հանցագործություն կատարած անչափահասների կրկնահանցագործությանն ուղղված կանխարգելիչ աշխատանքներ | ՀՀ Վայոց ձորի մարզպետարան | Բռնության ցանկացած ձևից երեխաների պաշտպանություն, իրավախախտումների և հանցագործությունների թվի նվազում, անչափահասների շրջանում իրավական գիտելիքների մակարդակի բարձրացում | 2022 թվականի ընթացքում | Կկատարվի այցելություններ մարզի 10 իրավախախտ անչափահասների ընտանիքներ, ամենամսյա հանդիպումներ կկազմակերպվի համայնքներում՝ զրույց-զեկույցներ հանրակրթական դպրոցներում | ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ |
| 120. | Աշխատանքներ առողջական խնդիրներ ունեցող երեխաների առողջության | ՀՀ Վայոց ձորի մարզպետարան | Կյանքի դժվար վիճակում հայտնված երեխաների, նրանց ընտանիքների սոցիալական երաշխիքների | 2022 թվականի ընթացքում | Առողջական խնդիրներ ունեցող 3 երեխա կստանա առողջարանային բուժում | ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | պահպանման, սոցիալապես անապահով, բազմազավակ, արցախյան պատերազմից տուժած, զոհված, անհետ կորած և վիրավոր զինծառայողների ընտանիքների երեխաների ամառային հանգստի ապահովման ուղղությամբ | | ապահովում, իրավունքների և շահերի պաշտպանություն | | Ջերմուկի մոր և մանկան առողջարանում, ԿԴԻԳ 190 երեխա ամառային հանգիստը կանցկացնի ճամբարներում | |
| 121. | Երեխայի կրթության իրավունքի իրացում, այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող (ԿԱՊԿՈՒ) երեխաների վկայագրում, տարբեր սոցիալական պատճառներով դպրոց չհաճախող երեխաների բացահայտման, կրթական համակարգին ինտեգրման աշխատանք | ՀՀ Վայոց ձորի մարզպետարան | Երեխայի կրթության իրավունքի ապահովում | 2022 թվականի ընթացքում | Համընդհանուր ներառականացում, կրթության առանձնա հատուկ պայմանների կարիք ունեցող 140 երեխա կիրացնի կրթության իր իրավունքը մարզի 43 դպրոցում | Ֆինանսական միջոցներ չեն պահանջվում |
| 122. | Աշխատանք երեխաների շուրջօրյա խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում խնամվող երեխաների կենսաբանական ընտանիք վերադարձի և հաստատությունում հայտնվելու ռիսկի խմբում գտնվող երեխաների ընտանիք վերադարձնելու, մուտքը հաստատություններ | ՀՀ Վայոց ձորի մարզպետարան | Աջակցություն երեխաների՝ ընտանիքում ապրելու իրավունքի իրացմանն ու բարեկեցությանը | 2022 թվականի ընթացքում | Կոտայքի մարզի «ՍՕՍ մանկական գյուղում գտնվող 2 և Երևանի «Զատիկ երեխաների աջակցության կենտրոն» ՊՈԱԿ-ում գտնվող 1 երեխայի ընտանքիների հետ կիրականացվի աշխատանքներ՝ երեխաներին ընտանիք վերադարձնելու ուղղությամբ, խնամակալության ներքո գտնվող 38 երեխայի | ՀՀ օրենքով չարգելված այլ միջոցներ |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | կանխարգելելու ուղղությամբ | | | | կցուցաբերվի աջակցություն | |
| 123. | Համագործակցության արդյունավետության բարձրացում համայնքների խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների, ընտանիքի և երեխաների հիմնահարցերով զբաղվող պետական և հասարակական կառույցների միջև | ՀՀ Վայոց ձորի մարզպետարան | Երեխաների և նրանց ընտանիքների իրավունքների և շահերի պաշտպանություն | 2022 թվականի ընթացքում | Համագործակցության բարձրացման նպատակով ոլորտային դերակատարների մասնակցությամբ կազմակերպված հանդիպումների թիվը | ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ |
| 124. | Աջակցություն ընտանիքում առկա տարաձայնությունների լուծմանը՝ ծնողական իրավունքի իրացման ընթացքում ծնողների կողմից փոխադարձ համաձայնության բացակայության դեպքերում | ՀՀ Վայոց ձորի մարզպետարան | Երեխայի շահերի և իրավունքների գերակայություն | 2022 թվականի ընթացքում | Աջակցություն կցուցաբերվի նտանեկան տարաձայնություններ ունեցող 10- 15 ընտանիքի, անհրաժեշտության դեպքում կուղղորդվեն համապատասխան մարմիններ՝ մասնագիտական ծառայություններ ստանալու համար | ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ |
| 125. | Աջակցություն երեխաների ծննդյան վկայականների ձեռքբերմանը՝ դրանց բացակայության դեպքերում | ՀՀ Վայոց ձորի մարզպետարան | Երեխայի ծննդյան պետական գրանցման հիմքերի ապահովում | 2022 թվականի ընթացքում | Հայտնաբերված դեպքերի թիվը, իրականացված աշխատանքների արդյունքում ձեռք բերված ծննդյան վկայականների թիվը | ՀՀ պետական բյուջե Օրենքով չարգելված այլ միջոցներ |
| ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ | | | | | | |
| 126. | Երեխայի ընտանիքում ապրելու իրավունքի իրացմանն ուղղված միջոցառումների ձեռնարկում | ՀՀ Տավուշի մարզպետարան | Ապահովված է երեխայի ընտանիքում ապրելու իրավունքը, նվազեցված է շուրջօրյա խնամք և պաշտպանություն իրականացնող | 2022 թվականի ընթացքում | Հաստատություններ մուտքը կանխարգելված կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների թիվ | ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | հաստատությունում հայտնվելու ռիսկը | | | |
| 127. | Աջակցություն երեխաների խնամքի ցերեկային ծառայությունների տրամադրման գործընթացին | ՀՀ Տավուշի մարզպետարան | Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված և հաշմանդամություն ունեցող երեխաների ուղղորդում համապատասխան ցերեկային կենտրոններ | 2022 թվականի ընթացքում | Ցերեկային կենտրոններ ուղղորդված կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների թիվ, որում՝ հաշմանդամություն ունեցող երեխաների թիվը | Ֆինանսական միջոցներ չեն պահանջվում |
| 128. | Բռնության ցանկացած ձևից երեխաների պաշտպանությանն ուղղված հանդիպումների կազմակերպում | ՀՀ Տավուշի մարզպետարան | Բռնության ենթարկված երեխաների թվի նվազեցում, անչափահասների շրջանում իրավագիտակցության մակարդակի բարձրացում | 2022 թվականի ընթացքում | Բռնության ցանկացած ձևից երեխաների պաշտպանությանն ուղղված հանդիպումներին մասնակցած անչափահասների թիվ | Ֆինանսական միջոցներ չեն պահանջվում |
| 129. | Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի անդամներին դեպքի վարման առանձնահատկություններ ի ուսուցում և խորհրդատվության տրամադրում | ՀՀ Տավուշ մարզպետարան | Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների վերապատրաստված անդամներ | 2022 թվականի ընթացքում | Դասընթացներին մասնակցած խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների անդամների թիվ | ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ |
| 130. | Խնամատար ծնող դառնալ ցանկացող անձանց հաշվառում, խնամատարության վերաբերյալ իրազեկման բարձրացում, հոգեզավակի խնամքի նկատմամբ վերահսկողության իրականացում | ՀՀ Տավուշի մարզպետարան | Ապահովված է կյանքի դժվարին իրավիճակում հայտնված և հաստատություններում գտնվող երեխաների խնամքն ու դաստիարակությունը խնամատար ընտանիքներում | 2022 թվականի ընթացքում | Խնամատար ընտանիքների թիվ<br><br>Հոգեզավակների թիվ<br><br>Իրականացված այցելությունների թիվ<br><br>Իրականացված իրազեկման ակցիաների թիվ | ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ |
| 131. | Կյանքի դժվարին իրավիճակներում հայտնված երեխաների | ՀՀ Տավուշի մարզպետարան | Ապահովված է ԿԴԻԳ երեխաների տեղեկատվական համակարգում համալիր և | 2022 թվականի ընթացքում | Մուտքագրված դեպքերի 90%-ի վերաբերյալ | Ֆինանսական միջոցներ չեն պահանջվում |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | «Մանուկ» տեղեկատվական համակարգի հետ տարվող աշխատանքներ | | ամբողջական տեղեկատվության առկայությունը | | ամբողջական տեղեկատվություն | |
| 132. | Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների վկայագրում, նրանց կրթական իրավունքի իրացման ապահովում | ՀՀ Տավուշի մարզպետարան | Ապահովված է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների լիարժեք ներառումը հանրակրթություն | 2022 թվականի ընթացքում | Վկայագրված կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների թիվ | Ֆինանսական միջոցներ չեն պահանջվում |
| 133. | Հաշմանդամություն ունեցող երեխաների սոցիալականացմանն ուղղված միջոցառումների իրականացում | ՀՀ Տավուշի մարզպետարան | Հաշմանդամություն ունեցող երեխաների հասարակության մեջ որպես լիարժեք անդամի գիտակցության ձևավորում | 2022 թվականի ընթացքում | Իրականացված հանդիպում-քննարկումների թիվ | Ֆինանսական միջոցներ չեն պահանջվում |
| 134. | Մարզի հանրակրթական դպրոցներում և այլ ուսումնական հաստատություններում աշակերտների (ուսանողների), ինչպես նաև վերջիններիս ծնողների և մանկավարժական կոլեկտիվների հետ, իրավական թեմաներով զրույցների և հանդիպումների կազմակերպում և անցկացում | ՀՀ Տավուշի մարզպետարան | Աշակերտների շրջանում իրավական գիտելիքների ձեռք բերում, ծնողների և մանկավարժների իրազեկվածության մակարդակի բարձրացում | 2022 թվականի ընթացքում | Իրականացված հանդիպումների թիվ | Ֆինանսական միջոցներ չեն պահանջվում |
| 135. | Առավել խոցելի խմբերի դպրոցականների ամառային հանգստի կազմակերպման աջակցություն | ՀՀ Տավուշի մարզպետարան | Ապահովված է ծնողազուրկ և սակավ ապահովված բազմազավակ ընտանիքների երեխաների ազատ ժամանցի ու ամառային հանգստի կազմակերպումը | 2022 թվականի ընթացքում | Մարզի շուրջ 220 կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների տարեկան հանգստի կազմակերպում | ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ |

| ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 136. | Արտակարգ իրավիճակներում և նմանատիպ այլ դեպքերում /օր.՝ համավարակ, պատերազմ և այլն/ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված /ԿԴԻՀ/ երեխաների իրավունքների և շահերի պաշտպանությանն աջակցություն, ըստ վերհանված կարիքի անհրաժեշտ աջակցության տրամադրման կազմակերպում: | 1.Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի երեխաների և սոցիալական պաշտպանության վարչություն<br><br>2.Վարչական շրջանների ղեկավարների աշխաակազմերի սոցիալական ապահովության, առողջապահության և ծրագրերի բաժիններ | ԿԴԻՀ երեխաների իրավունքների իրացմանն աջակցելություն, կարիքների ապահովմանն աջակցություն | 2022 թվականի ընթացքում | Շուրջ 30 ընտանիք /ըստ անհրաժեշտության/ | Երևան քաղաքի բյուջե շուրջ 4,500.0 հազ դրամ, Օրենքով չարգելված այլ միջոցներ |
| 137. | Քաղաքային մշակութային միջոցառումներում /երեխաների պաշտպանության միջազգային օրվան և ամանորին նվիրված/ ԿԴԻՀ երեխաների ներգրավում | Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի երեխաների և սոցիալական պաշտպանության վարչություն | ԿԴԻՀ երեխաների ինտեգրում հասարակական, մշակութային կյանք, նվերների տրամադրում | 2022 թվականի ընթացքում | 2 միջոցառում/ շուրջ 100 երեխա | Երևան քաղաքի բյուջե /շուրջ 1,000.0 հազ դրամ/, Օրենքով չարգելված այլ միջոցներ |
| 138. | Երեխայի պաշտպանության ոլորտում գերատեսչությունների և հասարակական կազմակերպությունների հետ համագործակցություն | Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի երեխաների և սոցիալական պաշտպանության վարչություն | Երեխայի իրավունքների և պաշտպանության իրացմանն աջակցում | 2022 թվականի ընթացքում | Շուրջ 70 /երեխաների և նրանց ընտանիքների գնահատված կարիքների ապահովմանն աջակցում/ | Երևան քաղաքի բյուջե /շուրջ 5,000.0 հազ դրամ/, Օրենքով չարգելված այլ միջոցներ |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 139. | Վարչական շրջանների աշխատակիցների համար վերապատրաստումներ՝ երեխաների իրավունքների և պաշտպանության նպատակով.<br><br>• վարչական շրջանների ղեկավարների համար<br>• խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների քարտուղարների համար<br>• սոցիալական աշխատողների համար | Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի երեխաների և սոցիալական պաշտպանության վարչություն | ԽՀՄ գործունեության կազմակերպման, միասնական պրակտիկայի ձևավորման, երեխաների հետ աշխատանքի վերաբերյալ նոր գիտելիքների և հմտությունների ձեռքբերում, կարողությունների զարգացում | 2022 թվականի ընթացքում | Երևան քաղաքի վարչական շրջանների շուրջ 100 աշխատակիցների վերապատրաստում | Երևան քաղաքի բյուջե /շուրջ 1,500.0 հազ դրամ/,<br>Օրենքով չարգելված այլ միջոցներ |
| 140. | Մանկալքության կանխարգելման նպատակով ծրագրի իրականացում /կացարանի տրամադրման կազմակերպում, կացարանի վարձավճարի, կոմունալ վճարների փոխհատուցում 3 ամսյա կտրվածքով, աշխատանքի տեղավորման համար անհրաժեշտ մասնագիտական գիտելիքների և հմտությունների նպատակով վերապատրաստման կազմակերպում, երեխաների տարիքային խմբակներում | Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի երեխաների և սոցիալական պաշտպանության վարչություն | ԿԴԻՀ երեխաների՝ ընտանիքից առանձնացման ռիսկի կանխարգելում կամ նպաստում վերամիավորմանը, երեխայի՝ ընտանիքում ապրելու իրավունքի իրացմանն աջակցում | 2022 թվականի ընթացքում | Մինչև 5 դեպք | Երևան քաղաքի բյուջե /շուրջ 2,000.0 հազ դրամ/,<br>Օրենքով չարգելված այլ միջոցներ |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | ներգրավվածության, մանկապարտեզ/դպրոց հաճախման կազմակերպում/ | | | | | |
| 141. | Կարիքների գնահատման արդյունքում բազմազավակ, երիտասարդ և այլ խմբերին պատկանող ընտանիքներին աջակցության տրամադրում | Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի երեխաների և սոցիալական պաշտպանության վարչություն | Բազմազավակ, երիտասարդ և այլ խմբերին պատկանող ընտանիքներում գտնվող ԿԴԻՀ երեխաների կարիքների բավարարմանն, երեխայի ընտանիքում ապրելու իրավունքի իրացմանն աջակցում | 2022 թվականի ընթացքում | Շուրջ 100 ընտանիք | Երևան քաղաքի բյուջե /շուրջ 20,000.0 հազ դրամ/, Օրենքով չարգելված այլ միջոցներ |
| 142. | Երևանի ավագանու 24.06.2020 թ. հ. 258-Ա որոշման ընդունմամբ սկիզբ է դրվել Երևան համայնքի երեխայի և սոցիալական պաշտպանության համակարգի բարեփոխումների, որն իրենից ենթադրում է հետագա բարեփոխումներ նաև վարչական շրջանների ղեկավարների աշխատակազմերում: | 1.Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի երեխաների և սոցիալական պաշտպանության վարչություն<br><br>2.Վարչական շրջանների ղեկավարների աշխակազմերի համապատասխան բաժիններ | Երևան համայնքում երեխայի և սոցիալական պաշտպանության նոր համակարգի ձևավորում, երեխաների պաշտպանության առավել արդյունավետ իրականցում: Երևանի քաղաքապետարանի աշխատակազմում իրականացված կառուցվածքային փոփոխության արդյունքում 2020թ.-ին ձևավորվել է երեխաների և սոցիալական պաշտպանության վարչությունը, որն ունի երկու բաժին՝ սոցիալական պաշտպանության և երեխաների պաշտպանության: Բաժիններում ներդրվել է սոցիալական աշխատողի, | 2022 թվականի ընթացքում | Շուրջ 60 սոցիալական աշխատողների հաստիքների ներդրում վարչական շրջաններում | ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | հոգեբանի և իրավաբանի հաստիքներ: Նոր կանոնադրությամբ երեխաների պաշտպանության բաժինն իրականացնում է իրավական ակտերով նախատեսված գործառույթները, ինչպես նաև իրականացնելու է վարչական շրջանների համապատասխան բաժինների սուպերվիզիան: Վարչական շրջաններում համապատասխան բաժիններում, մասնավորապես՝ սոցիալական ապահովության, առողջապահության և ծրագրերի բաժիններում կառուցվածքային փոփոխությունների արդյունքում նախատեսվում է ստեղծել երեխաների և սոցիալական պաշտպանության, առողջապահության բաժին, որտեղ ևս ներդրվելու է սոցիալական աշխատողի, հոգեբանի հաստիք: Վարչական շրջանների խնամակալության և հոգաբարձության մարմիններում պարտադիր ընդգրկվելու է հոգեբան և | | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | սոցիալական աշխատող: Վերջինս կիրականացնի համձնաժողովի քարտուղարին վերապահված գործառույթը: Նախատեսված բարեփոխումներն ուղղված են երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտի դերակատարների ձևավորմանը, նրանց կարողությունների և հմտությունների զարգացմանը, ինչպես նաև մեխանիզմների հզորացմանը:<br><br>Երեխաների և սոցիալական պաշտպանության վարչության կողմից վերհանվել և գույքագրվել են ոլորտի խնդիրները և լուծման ուղղությամբ անհրաժեշտ քայլեր ձեռնարկելու համար ներկայացվել են ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն՝ համատեղ լուծումներ տալու նպատակով: Բաժինն ընդգրկված է ոլորտում առկա իրավական խնդիրների, բարեփոխումների ուղղությամբ աշխատանքներ իրականացնող աշխատանքային խմբերում: | | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 143. | Երեխաների նկատմամբ բռնության ձևերի, դրսևորումների, նույնականացման և արձագանքման վերաբերյալ իրազեկման դասընթացների կազմակերպում կրթական հաստատությունների ներկայացուցիչների համար | Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի հանրակրթության վարչություն<br>Հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ) | Երևանի քաղաքապետարանի ենթակայության դպրոցների և մանկապարտեզների ներկայացուցիչների՝ երեխաների նկատմամբ բռնության ձևերին, դրսևորումներին, նույնականացման և արձագանքման մեխանիզմներին ծանոթացում | 2022 թվականի ընթացքում | Երևանի քաղաքապետարանի ենթակայության 153 դպրոցներում և 161 մանկապարտեզներում կնույնականացվեն բռնության դրսևորումները, կկիրառվեն արձագանքման մեխանիզմները | ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ |
| 144. | Երևանի քաղաքապետարանի ենթակայության դպրոցներում պարտադիր կրթությունից դուրս մնացած դպրոցահասակ երեխաների բացահայտման և ուղղորդման կարգի գործարկման արդյունքների վերաբերյալ քննարկման կազմակերպում | Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի հանրակրթության վարչություն | կրթական հաստատություններին վերապահված գործառույթներին առնչվող խնդիրների վերհանում | 2022 թվականի ընթացքում | Քննարկման արդյունքում կարձանագրվեն, կամփոփվեն և կրթության կառավարման լիազոր մարմին կներկայացվեն կրթական հաստատությունների ներկայացուցիչների կողմից ներկայացված խնդիրները | Ֆինանսական միջոցներ չեն պահանջվում |
| 145. | Երեխաների իրավունքների պաշտպանության օրվան նվիրված մշակութային միջոցառման իրականացում | Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի մշակույթի և տուրիզմի վարչություն | Մշակութային միջոցառման իրականացման միջոցով՝ երեխաների իրավունքների պաշտպանության գաղափարների և արժեքների հանրահռչակում | 2022 թվականի հունիսի 1 | 2000 մասնակից | Երևան քաղաքի բյուջե Օրենքով չարգելված այլ միջոցներ |
| 146. | Երևանի ենթակայության արտադպրոցական դաստիարակության հաստատություններում պատերազմական գործողությունների | Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի մշակույթի և տուրիզմի վարչություն | Արտադպրոցական դաստիարակության շարունակականության ապահովում, համայնքային | 2022 թվականի ընթացքում | 30 մասնակից | Ֆինանսական միջոցներ չեն պահանջվում |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | արդյունքում տուժած ընտանիքների երեխաների համար ուսուցման կազմակերպում | | սոցիալ-մշակութային կյանքի ինտեգրում | | | |
| 147. | Երևանի ենթակայության մշակութային կազմակերպություններում թեմատիկ միջոցառումների իրականացում | Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի մշակույթի և տուրիզմի վարչություն | Երեխաների իրավունքների պաշտպանության գաղափարների և արժեքների հանրահռչակում | 2022 թվականի ընթացքում | 1000 մասնակից | Ֆինանսական միջոցներ չեն պահանջվում |
| 148. | Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների (այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող) համար մշակութային արժեքներին հաղորդակցվելու, մշակութային ժամանցի կազմակերպմանն ուղղված միջոցառումների իրականացում | Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի մշակույթի և տուրիզմի վարչություն | Թատրոններ, թանգարաններ, այլ մշակութային կազմակերպություններ այցելելու հնարավորության ընձեռնման միջոցով համայնքային սոցիա-մշակութային կյանքին ինտեգրում | 2022 թվականի ընթացքում | 500 մասնակից | Ֆինանսական միջոցներ չեն պահանջվում»: |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

01.10.2021
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ